ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2016թ.1-ին կիսամսյակ /

| | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 1-ին կիս. |
|---|---|---|---|
| 1. Ստացվել են նամակներ ընդամենը | 451 | 404 | 855 |
| որից՝ | | | |
| աջակցություն | 439 | 401 | 840 |
| առաջարկություն | 2 | 1 | 3 |
| հարցում | 1 | 1 | 2 |
| *բողոք* | *9* | *1* | *10* |
| այդ թվում՝ | | | |
| կրկնակի | 4 | 1 | 5 |
| կոլեկտիվ | 10 | 5 | 15 |
| 3. Ըստ հարցի բնույթի՝ | | | |
| բնակարանային | 3 | 3 | 6 |
| կոմունալ-կենցաղային | 11 | 6 | 17 |
| շինարարական | 6 | 3 | 9 |
| արդձեռ/տրանսկապ/ | - | 1 | 1 |
| գյուղատնտեսական | 2 | 1 | 3 |
| բնութ. պահպանութ | 1 | - | 1 |
| առևտրի | 1 | 1 | 2 |
| կենսաթոշակի և նպաստի | 5 | 2 | 7 |
| առողջապահության | 61 | 58 | 119 |
| կրթական և մանկ.հիմն | 55 | 23 | 78 |
| գիտութ.կուլտուրա | - | 2 | 2 |
| ֆինանսական | 240 | 246 | 486 |
| օրենսդրական | - | - | - |
| քաղ. և որդեգրման | - | 3 | 3 |
| աշխ.տեղ և հաշվառման | 36 | 25 | 61 |
| հողհատկացում և հողօգտ | 2 | 3 | 5 |
| միգրացիոն ծառ. վերաբերյալ | 6 | 8 | 14 |
| ապարատային | 11 | 8 | 19 |
| այլ հարցեր | 11 | 11 | 22 |

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիներից ստացվել է 855 դիմում, որից 840-ը՝ աջակցության խնդրանքով, 10-ը՝ բողոք, 3-ը՝ առաջարկություն, 2-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 33 դիմումներին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 61 դիմումներից դրական լուծում է ստացել 8-ը, մյուսները վերցվել են հաշվառման: Միգրացիոն ծառայության վերաբերյալ 14 դիմումներից դրական լուծում է ստացել 5 դիմում:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 48 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 486 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 402 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 39 քաղաքացիներից բավարարվել է 35-ի խնդրանքը, 12 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 45 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2016 թվականի առաջին կիսամյակում կատարվել է 312 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: